Տարբերակ 1.0
Հաստատված է Տնօրենների խորհրդի
25.06.2025թ. որոշմամբ:

«ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»ՓԲԸ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Հիմնական սկզբունքները
   - 2.1 Գնի և որակի հարաբերակցություն
   - 2.2 Տնտեսավետություն
   - 2.3 Արդյունավետություն
   - 2.4. Արդարության սկզբունք
   - 2.5. Թափանցիկություն
   - 2.6. Գնումների գործընթացի որակ
3. Գործարար վարք և էթիկա
4. Շահերի բախում
5. Գնումների պլանավորում
   - 5.1. Գնումների պլանավորման նպատակը
     - 5.1.1. Հիմնական սկզբունքներ
   - 5.2. Գնումների պլան
   - 5.3. Ռիսկերի կառավարում գնման գործընթացում
6. Կապալառուներին և ապրանքների ու ծառայությունների մատակարարներին ներկայացվող պահանջներ
7. Լիազորությունների բաշխում
8. Գնումների ընթացակարգ
9. Շահագրգիռ կողմերի ներգրավում
10. Սոցիալական և բնապահպանական տեսանկյունից կայուն գնումներ
    - 10.1. Սոցիալ-տնտեսական և բնապահպանական միջավայրի կայուն զարգացման խթանում
11. Բողոքների կառավարում
12. Աշխատակազմի ուսուցում և զարգացում
13. Նորարարություններ և գործընթացների բարելավում

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՁՊՄԿ
«Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

Քաղաքականություն
«ՁՊՄԿ» ՓԲԸ-ի գնումների քաղաքականություն

ՀՀ
Հայաստանի Հանրապետություն

Առաջարկ
Կոմերցիոն առաջարկ կամ Մասնակցի գնման առաջարկ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մատակարարման նպատակով

Աշխատակից
ՁՊՄԿ-ի աշխատակից, ով աշխատանքային հարաբերությունների մեջ է գտնվում կազմակերպության հետ, կամ արտաքին կապալառուի (աութսորսինգի գործակալության) ներկայացուցիչ, ով լիազորված է գնումների ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա, և իր ծառայողական պարտականությունների համաձայն՝ իրականացնել գնումների ընթացակարգը ՁՊՄԿ-ի անունից և ՁՊՄԿ-ի շահերից ելնելով

Ընթացակարգ
ՁՊՄԿ-ի գնումների ուղեցույց

ԳՈՀ
Գնի և որակի հարաբերակցություն

TCO
Total Cost of Ownership/ Սեփականության համախառն արժեք

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՁՊՄԿ-ի քաղաքականությունը մշակվել է ՁՊՄԿ-ի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, այդ թվում՝ խորհրդատվական ծառայությունների գնումների գործընթացը կարգավորելու նպատակով:

Քաղաքականությունը հանդիսանում է հիմնարար փաստաթուղթ ՁՊՄԿ-ի Գնումների գործունեության ոլորտում: Սույն Քաղաքականությամբ սահմանված Գնումների գործընթացի հիմնական նպատակները, խնդիրները, սկզբունքները և չափորոշիչները գերակայություն ունեն Գնումների գործընթացը կարգավորող այլ ներքին փաստաթղթերի նկատմամբ:

ՁՊՄԿ-ի գնումների գործունեությունն իրականացվում է համաձայն ՀՀ գործող օրենսդրության, սույն Քաղաքականության, ինչպես նաև ՁՊՄԿ-ի այլ փաստաթղթերի, որոնք կարգավորում են գնումների կազմակերպման և իրականացման, պայմանագրերի կնքման և կատարման հետ կապված հարցերը:

Սույն Քաղաքականությամբ սահմանված սկզբունքներն ու կանոնները նպատակ ունեն վերահսկելու, ուղղորդելու և ծառայելու որպես ուղեցույց այն անձնակազմի համար, ովքեր լիազորված են իրականացնելու գնումների գործառույթներ կամ որևէ կերպ կապված են գնումների գործընթացի հետ՝ դրան առնչվող գործառույթներում:

Սույն Քաղաքականության դրույթների և ՁՊՄԿ-ի այլ փաստաթղթերի միջև որևէ անհամապատասխանության կամ հակասության դեպքում գերակայում են սույն Քաղաքականության դրույթները:

Հաշվի առնելով ՁՊՄԿ-ի գնումների հատուկ պահանջները՝ սույն Քաղաքականության կանոնները չեն տարածվում հետևյալ գործողությունների վրա.

- Արժեթղթերի և արժութային արժեքների առք ու վաճառքի համար բրոկերների ընտրություն,
- Արժեթղթերի և արժութային արժեքների ձեռքբերում և վաճառք,
- Արտաքին իրավաբանական ծառայություններ,
- Առանձին տեսակի գնումներ, որոնց նկատմամբ ՁՊՄԿ-ի գործադիր մարմնի որոշմամբ հաստատվել է հատուկ ընթացակարգ:

ՁՊՄԿ-ի գնումների նպատակն է ձեռք բերել սահմանված նպատակների համար համապատասխան ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ՝ սահմանված ժամկետում և համապատասխան ծախսերով ու որակական բնութագրերով՝ հավասարակշռելով տնտեսական, արդյունավետության, գնի և որակի հարաբերակցության, թափանցիկության, հաշվետվողականության, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական կայունության ընդհանուր ինստիտուցիոնալ պահանջները:

**Սույն Քաղաքականությունը կատարված է երեք բնօրինակով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանությունների հետ կապված տարաձայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի հայերեն տեքստին:*

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գնումների հիմնական սկզբունքների նպատակն է ապահովել թափանցիկություն գնումների ընթացակարգերի իրականացման և դրանց հետ կապված կայացված որոշումների գործընթացում, ինչպես նաև ստեղծել պայմաններ արդար մրցակցության համար, կանխել կոռուպցիոն ռիսկերը և հասնել միջոցների արդյունավետ օգտագործմանը:

2.1. ԳՆԻ ԵՎ ՈՐԱԿԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գնումները պետք է ապահովեն օպտիմալ ԳՈՀ, ինչը նշանակում է ստանալ առավելագույն գործառնական օգուտներ կիրառվող ռեսուրսներից: Դրանք կարող են ներառել ոչ միայն սկզբնական ծախսերը, այլ նաև գնվող ապրանքի ծախսերը գործառնական ցիկլի ընթացքում (TCO- Սեփականության համախառն արժեք), արտադրանքի որակը և մատակարարման ժամկետները: ԳՈՀ-ի ապահովման համար, գնումների գործընթացը պետք է ապահովի ՁՊՄԿ-ի կողմից կիրառվող գնման մեթոդների ու ընթացակարգերի համապատասխանությունը առաջադրված նպատակին:

2.2. ՏՆՏԵՍԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Գնումներն իրականացվում են հաշվի առնելով տնտեսավետության սկզբունքը, որը ենթադրում է գնի և որակի լավագույն հարաբերակցության հասնելը գնման օպտիմալ պայմաններում:

Որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում.

- ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքը,
- վճարման պայմանները և ժամանակացույցը,
- որակը և երաշխիքային պարտավորությունները,
- մատակարարման ժամկետները և կանոնավորությունը,

այլ համապատասխան ոչ գնային գնահատման չափանիշներ, եթե դրանք չեն վատթարացնում գնման տնտեսական և ֆինանսական արդյունավետությունը:

2.3. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Գնումների գործընթացի կազմակերպում և օպտիմալացում՝ կարիքների արդյունավետ և ժամանակին բավարարումն ապահովելու համար, վարչական ռեսուրսների և ժամանակի նվազագույն ծախսերով՝ ՁՊՄԿ-ի առաջնահերթ նպատակային ցուցանիշներին հասնելու համար:

2.4. ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

Արդարության սկզբունքը սահմանվում է երեք հիմնական դրույթներով.

ա. գնումների մասնակիցներին հավասար պայմանների ապահովում,

բ. ՁՊՄԿ-ի և գնումների մասնակիցների միջև իրավունքների և պարտականությունների արդար բաշխում,

գ. գնումների հետ կապված բողոքները դիտարկելու համար հուսալի մեխանիզմների ստեղծում և մատչելի իրավական պաշտպանության միջոցների ապահովում:

2.5. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Գնումների թափանցիկության սկզբունքը դա գնման գործընթացի բոլոր փուլերում տեղեկատվության հասանելության և մատչելիության ապահովումն է: Այն ենթադրում է, որ գնումների անցկացման, արդյունքների և պայմանագրերի կնքման վերաբերյալ տեղեկատվությունը պետք է լինի հրապարակային, հասկանալի և հավասարապես հասանելի բոլոր շահագրգիռ կողմերի համար:

Թափանցիկությունն ապահովվում է հետևյալի միջոցով.

- գնումների մասին տեղեկատվության հրապարակում բաց աղբյուրներում,
- գնման պայմանների հստակ և միանշանակ ձևակերպում,
- գնման գործընթացի փաստաթղթավորում:

2.6. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՐԱԿ

Գնումների գործընթացի կազմակերպում, որն ուղղված է ժամանակին և արդյունավետ ելակետային ռեսուրսներ ձեռք բերելուն և համապատասխան մակարդակում վերջնական արդյունքներ ստանալուն՝ ռազմավարական և գործառնական նպատակներին հասնելու համար՝ հաշվի առնելով առաջադրված և առաջնայնություն ունեցող պայմանները (ծախսերի, ժամանակի և որակի հարաբերակցություն և այլն), ռիսկերը և գնումների բարդությունը:

3. ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՔ ԵՎ ԷԹԻԿԱ

ՁՊՄԿ-ի գնումները պետք է համապատասխանեն գործարար վարքի և էթիկայի ամենաբարձր չափանիշներին և ապահովեն ապրանքների, ծառայությունների և աշխատանքների մատակարարների ինչպես նաև պոտենցիալ մատակարարների նկատմամբ արդար և հավասար վերաբերմունք: ՁՊՄԿ-ն կձգտի համագործակցել այն մատակարարների հետ, ովքեր ցուցադրում են առաջադեմ փորձ շրջակա միջավայրի կառավարման ոլորտում (ներառյալ էներգաարդյունավետությունը և ռեսուրսաարդյունավետությունը, թափոնների կրճատումը և վերամշակման և վերաօգտագործման գործընթացների իրականացումը) և մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում (օրինակ՝ հավասար հնարավորությունների ապահովումը, անվտանգության և աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանումը և արժանապատիվ աշխատանքային պայմանների ապահովումը):

Ցանկացած գնում իրականացնող աշխատակից պետք է ապահովի ՁՊՄԿ-ի Անձնակազմի վարքագծի կանոնակարգի պահպանումը:

ՁՊՄԿ-ն ակնկալում է էթիկայի ամենաբարձր նորմերի պահպանում նաև իր բոլոր մատակարարներից և կապալառուներից:

4. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

Շահերի բախումը մի իրավիճակ է, որի դեպքում որևէ կողմի շահերը կարող են ոչ պատշաճ կերպով ազդել տվյալ կողմի իր պաշտոնական գործառույթների, պարտականությունների, պայմանագրային պարտավորությունների կատարմանը կամ կիրառելի օրենսդրության և նորմատիվ ակտերի պահպանմանը:

ՁՊՄԿ-ն համապատասխան միջոցներ կձեռնարկի անձնակազմի, մատակարարների և խորհրդատուների շահերի բախումը կանխելու և կարգավորելու համար՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով համագործակցության առաջարկների, կոմերցիոն առաջարկների մերժմամբ, եթե ՁՊՄԿ-ն որոշի, որ շահերի բախումն ազդել է կամ կարող է ազդել գնման գործընթացի իրավաչափության և սույն Քաղաքականությանը և ՁՊՄԿ-ի կողմից հաստատված այլ կանոնակարգերին ու չափորոշիչներին դրա համապատասխանության վրա:

Այս հարցը մանրամասն կարգավորվում է ՁՊՄԿ-ի Վարքագծի կանոնակարգով:

5. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Գնումների պլանավորումը մատակարարման արդյունավետ կառավարման հիմնական տարր է և պետք է իրականացվի՝ հաշվի առնելով ՁՊՄԿ-ի արտադրության ժամանակացույցը, կորպորատիվ նպատակները և ռազմավարական առաջնահերթությունները:

5.1. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿ

Ապահովել ՁՊՄԿ-ի անխափան գործունեության համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ժամանակին և տնտեսապես հիմնավորված ձեռքբերում՝ միաժամանակ նվազագույնի հասցնելով դեֆիցիտի, ավելցուկային պաշարների և ոչ նպատակային ծախսերի ռիսկերը:

5.1.1 Հիմնական սկզբունքներ

- **Պահանջների կանխատեսում.** Գնումները պետք է հիմնված լինեն արտադրական պլանների, տեխնիկական սպասարկման ժամանակացույցերի, պահանջարկի սեզոնային տատանումների և այլ համապատասխան գործոնների վերաբերյալ հուսալի տվյալների վրա:
- **Համաձայնեցում շահագրգիռ կողմերի հետ.** Գնումների պլանները պետք է համաձայնեցվեն ներքին պատվիրատուների, տեխնիկական և ֆինանսական բաժինների հետ:
- **Ժամանակի և ծավալների օպտիմալացում.** Պլանավորումը պետք է հաշվի առնի պատվերների համախմբման, լոգիստիկայի օպտիմալացման և մասշտաբների հաշվին ծախսերի նվազեցման հնարավորությունները:
- **Ճկունություն և հարմարվողականություն.** Արտադրական առաջնահերթությունների կամ շուկայական պայմանների փոփոխությունների դեպքում գնումների պլանները պետք է անհապաղ վերանայվեն և համապատասխանեցվեն:

5.2. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Գնումների պլանը կարող է ներառել հետևյալ տեղեկությունները.
- գնման նախահաշվային արժեքը,
- առաջարկվող գնման մեթոդները,
- գնումների փաստաթղթերի և պայմանագրերի ձևերը որոնք օգտագործվելու են գնման գործընթացում,
- Գնումների արդյունքների հաստատման մեթոդները և այլն:

5.3. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Գնումների գործընթացի հետ կապված ռիսկերի նույնականացումը, գնահատումը և կառավարումը հանդիսանում են գնումների պլանավորման անբաժանելի մասը:

ՁՊՄԿ-ն համակարգված կերպով կմշակի և կներդնի միջոցներ՝ հայտնաբերված ռիսկերը նվազեցնելու և կառավարելու համար, ներառյալ՝
- Կապալառուների և մատակարարների մոնիթորինգ, որը ներառում է նաև համալիր ստուգումների իրականացում (due diligence), որը նախատեսում է հակակոռուպցիոն ռիսկերի գնահատում, պատժամիջոցների ցուցակներում առկայության ստուգում, ինչպես նաև իրական շահառուի սեփականության կառուցվածքի սահմանում և վերլուծություն, ինչպես նաև այլ համապատասխան ստուգումներ,
- հավանական կապալառուների և մատակարարների հուսալիության, գործարար համբավի և ֆինանսական կայունության գնահատում,
- շուկայական պայմանների և լոգիստիկ ռիսկերի գնահատում,
- այլընտրանքային սցենարների և մատակարարման ուղիների մշակում:

6. ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻՆ և ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԶՊՄԿ-ի ռազմավարությունը կայանում է կապալառուների և ապրանքների ու ծառայությունների մատակարարների հետ իրավաբանորեն հիմնավորված, ֆինանսապես կայուն, փոխշահավետ և երկարաժամկետ գործընկերային հարաբերությունների կառուցման մեջ:

ԶՊՄԿ-ի գնումների ընթացակարգերը կարող են նախատեսել որակավորման պահանջներ՝ կապված աշխատանքային փորձի, ռեսուրսների և հիմնական գործունեության ուղղությունների հետ: Միևնույն ժամանակ, այդ պահանջները պետք է լինեն հիմնավորված և ձևակերպված այնպես, որ չստեղծեն անհիմն առավելություններ առանձին մասնակիցների համար կամ չսահմանափակեն հավասար մասնակցության հնարավորությունները:

7. ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

Գնումներ կազմակերպող և գնումներին մասնակցող ստորաբաժանումների համապատասխան լիազորությունները կարգավորվում են ԶՊՄԿ-ի ներքին նորմատիվ ակտերով:

8. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Գնումների իրականացման, առաջարկների գնահատման, գնահատման արդյունքների հաստատման, պայմանագրի կնքման գործընթացը, կիրառվող գնման մեթոդների ցանկը և նկարագրությունը, գնումների փաստաթղթերի նկարագրությունը և դրանց պահանջները, ինչպես նաև գնումների շեմային արժեքները սահմանվում են ԶՊՄԿ Գնումների Ուղեցույցում:

Մեկ աղբյուրից գնումը սահմանվում է որպես ցանկացած պայմանագիր, որը կնքվում է առանց գնումների գործընթաց անցկացնելու՝ ԶՊՄԿ Գնումների Ուղեցույցում նշված դեպքերում և կարգով:

9. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

ԶՊՄԿ-ն խրախուսում է ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի հետ բաց երկխոսության հաստատումը՝ ներառյալ աշխատակիցների, մատակարարների, տեղական համայնքների և կարգավորող մարմինների հետ՝ նրանց շահերը հաշվի առնելու և սոցիալական ռիսկերը նվազեցնելու համար:

10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԳՆՈՒՄՆԵՐ

ՁՊՄԿ-ի բնապահպանական և սոցիալական շրջանակները արտացոլում են նրա ինստիտուցիոնալ նպատակները՝ վերացնել բնապահպանական և սոցիալական ռիսկերը և ապահովել բնապահպանական և սոցիալական անվտանգությունն ու կայունությունը:

ՁՊՄԿ-ն մտադիր է գործել որպես էկոլոգիապես և սոցիալապես պատասխանատու ընկերություն:

Սահմանված նպատակը հաջող գործնական արդյունքների վերածելու համար ՁՊՄԿ-ն պետք է ապահովի գնվող ապրանքների և ծառայությունների համապատասխանությունը կիրառելի իրավական և այլ պահանջներին: Այս պահանջները ներառում են միջազգային բնապահպանական համաձայնագրեր, որոնք կնքվել են այն երկրի կողմից, որտեղից ձեռք են բերվում ապրանքներն ու ծառայությունները և որոնք առաջնահերթություն են տալիս երկարաժամկետ և բազմակի օգտագործմանը, էներգաարդյունավետությանը և շրջակա միջավայրի վրա ցածր ազդեցությանը, թափոնների նվազեցմանը, վերամշակվող նյութերի օգտագործմանը և շրջակա միջավայրին հասցվող վնասի նվազեցմանը:

ՁՊՄԿ-ն բնապահպանական և սոցիալական ասպեկտները, չափանիշները և պահանջները ներառելու է գնումների պլանավորման, բնութագրերի, տեխնիկական պայմանների և աշխատանքների ծավալի մեջ: Այնուհետև դրանք կարտացոլվեն հայտերի հարցումներում, գնումների մասնակցության հրավերներում, ՁՊՄԿ-ի կողմից հրապարակվող Գնումների փաստաթղթերում, իսկ այդ քաղաքականություններն իրականացնելու նպատակով կիրառվող գնահատման չափանիշները կներառվեն տեխնիկական գնահատման մեջ և հաշվի կառնվեն գնման առաջարկի վերլուծության ժամանակ:

ՁՊՄԿ-ն պահանջում է, կապալառուներից և ապրանքների ու ծառայությունների մատակարարներից պահպանել տեղական և միջազգային սոցիալական ստանդարտները ու պահանջները, որոնք ապահովում են աշխատանքի արժանապատիվ պայմաններ, աշխատանքի անվտանգություն, ողջամիտ աշխատավարձ, արտոնություններ, բազմազանության նկատմամբ հարգանք և այլ աշխատանքային ստանդարտներ:

10.1. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ և ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Գնումների իրականացման գործընթացներում ՁՊՄԿ-ն խրախուսում և կիրառում է չափանիշներ, որոնք ուղղված են ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մատակարարների գործունեության խթանմանը՝ նպաստելու սոցիալ-տնտեսական և էկոլոգիական միջավայրի կայուն զարգացմանը, այնպիսի նպատակային տարածաշրջաններում կամ տնտեսության առանձին ոլորտներում, որոնք սահմանված են ՁՊՄԿ կայուն զարգացման ռազմավարական նպատակներում, պայմանով եթե այդ մատակարարները համապատասխանում են գնումների գործընթացում սահմանված չափանիշներին և կայուն զարգացման սկզբունքներին:

Կայուն սոցիալ-տնտեսական և էկոլոգիական զարգացման ուղղությամբ չափանիշների կիրառման և գնահատման մեթոդաբանությունը կարգավորվում է ՁՊՄԿ Գնումների Ուղեցույցով:

11. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գնումների հետ կապված բողոքները գնման գործընթացի անցկացման վերաբերյալ կարող են դիտարկվել ԶՊՄԿ-ի կողմից գնման գործընթացի անցկացման յուրաքանչյուր առանձին փուլում: Բողոքները պետք է դիտարկվեն օբյեկտիվորեն, ժամանակին, թափանցիկության և արդարության սկզբունքներին համապատասխան:

Բողոքների կառավարման ընթացակարգը սահմանված է ԶՊՄԿ Գնումների Ուղեցույցում:

12. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԶՊՄԿ-ն գնման գործընթացում ներգրավված աշխատակիցների համար ապահովում է պարբերական ուսուցում և որակավորման բարձրացում՝ նրանց մասնագիտական կարողությունները բարելավելու և բարձր պրոֆեսիոնալիզմը պահպանելու համար, ներառյալ նոր ընթացակարգերի, տեխնոլոգիաների, կայուն գնումների վերաբերյալ վերապատրաստումներ՝ գործնականում դրանց արդյունավետ կիրառման նպատակով:

13. ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԶՊՄԿ-ն խրախուսում է ժամանակակից տեղեկատվական համակարգերի ներդրումը գնումների գործընթացի ավտոմատացման, օպտիմալացման և թափանցիկության ու արդյունավետության բարձրացման համար:

ԶՊՄԿ-ն գիտակցում է գնումների նոր մեթոդների ընդլայնման հնարավորություններ, ինչպիսիք են էլեկտրոնային գնումները, և մտադիր է, հնարավորինս նպաստել այդ մեթոդների կիրառմանը՝ գնումների գործընթացի թափանցիկությունը և արդյունավետությունը բարձրացնելու համար:

Հեռ.՝ +374-60-500003, +374-285-33131
Էլ փոստ՝ info@zcmc.am